ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

2015թ. օգոստոսի 18-ին, թիվ 89 -Ա

ք.Աշտարակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ՄՐՑԱՆԱԿԻ ՀԱՄԱՐ <<ԼԱՎԱԳՈՒՅՆ ՄԱՐԶԱԿԱՆ ԸՆՏԱՆԻՔ>> ՄՐՑՈՒՅԹԻՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԱՊԱՀՈՎԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԴՐԱՄԱՇՆՈՐՀ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ԵՎ ԾԱԽՍԵՐԻ ՆԱԽԱՀԱՇԻՎԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.12 կետի <<բ>> և 1.19 կետի <<ա>> ենթակետերի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի օգոստոսի 6-ի N 901 -Ն որոշումը, **ո ր ո շ ու մ եմ՝**

1. Հայաստանի Հանրապետության Նախագահի մրցանակի համար <<Լավագույն մարզական ընտանիք>> հանրապետական մրցույթին Արագածոտնի մարզի մասնակցությունը ապահովելու նպատակով <<Ուրան Տեքս>> սահմանափակ պատասխանատվության ընկերությանը հատկացնել 999840 (ինը հարյուր իննսունինը հազար ութ հարյուր քառասուն) դրամ գումարով և << Տ.Խաչատրյան >> անհատ ձեռներեցին 200160 (երկու հարյուր հազար հարյուր վաթսուն) դրամ գումարով և սահմանված կարգով կնքել դրամաշնորհի հատկացման պայմանագիր:
2. Հաստատել Հայաստանի Հանրապետության Նախագահի մրցանակի համար <<Լավագույն մարզական ընտանիք>> մրցույթի ծախսերի նախահաշիվը՝ համաձայն հավելվածի:
3. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետարանի աշխատակազմի ղեկավարին՝ ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

Ժամանակավոր պաշտոնակատար Մ.ԱԲԳԱՐՅԱՆ

Հավելված

ՀՀ Արագածոտնի մարզպետի

2015թ. օգոստոսի 18 -ի

N 89-Ա որոշման

ԾԱԽՍԵՐԻ ՆԱԽԱՀԱՇԻՎ

Հայաստանի Հանրապետության Նախագահի մրցանակի համար<<Լավագույն մարզական ընտանիք>> մրցույթի հանրապետական փուլի կազմակերպման և անցկացման

Հ/Հ	Ծախսերիանվանումը	Քանակը	Գումարը/ՀՀ.դրամ/
1	Մարզահագուստների համար նախատեսված ծախսեր	40	999840
2	մարզակոշիկների համար նախատեսված ծախսեր	40	200160
	Ընդամենը		1.200.000